

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54րդ ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 13

27 ՄԱՐՏ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զատիկ Նօթեր. Տ. Ա. — Գրեթերներ (Բանաստեղծութիւն) ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ. — Զատիկ ձանձնիկը (Աւանդակ) Վ. Ա. ՀԱՆ ՎԱՐԴ. ՊԱՐՏԻԶԱԿՅԻ: — Գիտական Բրոնիկ. ՆՈՒՊԱՐ: Ներկու քնացողները (Բանաստեղծութիւն) ԷՅԺԷՆ ՄԱՆԻԻԷԼ. Թարգմ. Զիմթէ-ՍԱՐԱՅ. — Մամահն Քրիստոսը (Զատիկ պոէմութիւն) ՊԱՐԷՏ. Օսար Էջեր. «Կեօք Եւ Լոռ» Պայըն. ԵՐՈՒԱՆԴԱՆՍԻ ՄԵՍԻԱՆԱՆ. — Տերեւները. ՓԱՅԼԱԿ. — Նորերու բաժինը. — Գեղարուեստ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթների արեւելեան բաժանորդագրիւնն է Կ. Պոլսոյ համար հասնուն դրո. եւ գաւառներուն համար իսուն դրո. կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Զրաք կամ 5 ռուպլի: Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրու քիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելի ամէն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիրամտաչելի պայմաններով:

Զեմ-Բէ ԿՐ ՇԱԽՈՒԻ ՀԱՏԲ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

در علییه غلطه (ماسيس) غرضی اداره

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Դալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՄ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կառավարութեան ֆոնդօյից ներքեւ, երաշխաւորեալ դրամագումար ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատած է՝ միշտ գոյժաւոր է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբ եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեան ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հոն. բաժանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուններէն զտա, Բարիզի՝ Օրէրա, Վալիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Ֆօլի-Տրամաթիք եւ այլն թատրոնները, նաեւ Պօստոյի, Թուլուզի, Լիօնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալէքրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատունները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտինիէի, Օթէլ, աը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսաթլանթիք, Հալը-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոսագրութեան, Ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկերութիւնը, իր Կազմական Կանոնագրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ մը իր ելմական կազութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական Նախարարութեան քննութեանը. նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիզի Առեւտրական Սենեակին եւ այլն:

Ընկերութեան դրամատունն է՝ Գրէտի Լիօնէն:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎՈՂԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Փր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Ց Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գինեւոյ: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bônifices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Քաթրըք Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Խալայէթ խան: Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎՍԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պատկապան Դիսպանտան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Զբոսեան աբաւքման

Պալպալեան ամէն օր ակոյալի ամէն տե-
ռակ հիւանդութիւններով տառապողներ,
կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեք-
շաբթի մինչեւ ժամը 5: Դիպերուան օր եւ է
ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'ե-
րաշխաւորէ իր լեցուցած ու չինած ակոյա-
նելը: Ճորձիկները ակոյալ քաշել տալու հա-
մար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին
կամքէն կ'ախտալ է:

Ազգայնեան ճգի

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ




Եթէ կ'ուզէք ամէն տե-
ռակ գոհարեղէններ ունե-
նալ, աժան ու ճաշակա-
ւոր, թէ՛ արեւելեան եւ
թէ՛ եւրոպական ճաշակով
պատրաստուած, ժամա-
ցոյցներ, արծաթեայ գա-
ւազաններ եւ այլն, դիմե-
ցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շու-
կան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար
100ին 5 չաբաթական վճարում: Կանխիկ գնո-
ղին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած
գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին
10 զեղչով ետ կ'առնուին. իսկ ապառիկ գը-
նառներէն՝ 100ին 15 զեղչով:

ՀԱՋԱՐԱՆՈՐ ՏԱՐԻՆԵՐ

Աս նոր գիւտի Օրուան հետ համեմատելով խիստ քիչ կարեւորութիւն մը ունին։



Հիշեցու վրայ ասոր ուշա-
դրութիւն ընել պէտք է։

23

և արեան տկարութիւն և միւս արեան քէշութեան հետ
անքնեղը, որոնք մարմնայ տկարութեան նշաններն են, ...
պիտի աղետները դարմանող և բժշկող դեղ մը կրնայ միայն ամեն
կարեւոր և ամենաքանձելի բան մը համարուիլ։ Ահաւն է՝
հիմայ աշխարհիս մէջ կայ դեղ մը բոլոր այն անտերու դէմ

SCOTT'S EMULSION

որ Առեգական միջնորդարի մէջ գտնուած փոշիները չորցնելուն
պէս, նոյն հիւանդութիւնները կը բժշկէ։

ԸՍԿՕԹ ԲԵՂԵՂՐՈՒԹԻՒՆ

նաեւ մարդկային մարմինը շրջապատած բոլոր օրէնքը հետեւ
կը վերնառէ։

ԸՍԿՕԹ ԲԵՂԵՂՐՈՒԹԻՒՆ

Արեան տկարութիւն ունեցող անոնք կեանքը կը փրկէ։

Բոլոր բեղմնաբերիչ և բեղմնաբերիչ չեն։

ՅԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

Ունի կեանքի, օժիտի, արկածի, ցմահ բուսակի միտք

VICTORIA
DE
BERLIN

ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛
բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց բժշկական քննութեան
Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ
բուն վճարումները շտաբական մասնավճարներով տեղի կունենան,
սկսեալ 5 շաբաթէն

Ապահովագրեալ գումար 190 թիւ Ֆր. 1,244,457,577
Պահեստի դրամ 190 թիւ » 451,284,214

Հաստատուած 1853 թիւի 20-ին ար-
խայակ օմ հրովարտելով եւ ուղղակի
կառավարութեան հսկողութեան ներ-
քէն։

ԸՆԿ. ԴՐՈՒՍՏՈՒՆՆԵՐԸ
Օսմ. կայսր Պահքա
եւ Քրիտի Լիոնէ

Լիպգոր Ընդհ. Ներկայացուցիչ
ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԳԱԼՅԱՅԵԱՆ
Պոլիս Բաքրեքոյու խան
թիւ 45 եւ 45 Կ.

Տեսուչ
ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԵՉԷՃԵԱՆ

ՄԱՍԻՆ

54^ր ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 13

27 ՄԱՐՏ 1904

ԶԱՏԿԻ ՆՕՐԵՐ

Զատիկ եւ Գարուն այնքան հոմանիշ են իրարու, որ նոյն իսկ երբ Մարտի վերջին ցրտագին օդերուն հանդպի Աւագ Շաքաթը, դարձեալ կուզենք զգալ ընտելեան վերադարձումը՝ հոգեկան հրճուանքի այս օրուն մէջ։ Այսպէս սորվեցուցած է մեզի աւանդութիւնը, եւ կը սիրենք տեսնել եղանակին առաջին դեղին ծաղիկները Աւագ Հինգշաբթիի սպիտակ սեղանին վրայ՝ խընկարկութեանց հետ խառնելով իրենց անոյշ բուրումը։

Կրօնային բանաստեղծութեան ու ներշնչութիւնի գերադասաց տօնն է զոր կ'ողջունենք այսօր, ինքնաբեր մղումով մը դիմելով եկեղեցի՝ որուն սեմին վրայ կը թողունք ինչ սկեպտիկ մտածում ու զգացում որ ունեցեր ենք տարուան մէջ, հետեւելով արարողութիւններուն ու ազդուելով երգեցողութիւններէն՝ անկեղծ խանդով մը որուն մէջ կ'ամփոփուի մեր բոլոր հաւատքը։ Եւ ծերունին ու հիւանդը որոնք տանը անկիւնը գամուած կը մնան, կը շարժին իրենց տեղէն ու կը խալկնեցնեն արցունքոտ աչքերով՝ երբ կը լսեն կոչնակին ձայնը որ կը թրթռայ ու կը մարի օդին մէջ, հրաւիրելով բարեպաշտները։ Զերմեւանդութիւնը նոյնն է՝ եկեղեցիին մէջ ու եկեղեցիէն դուրս։

Ամէն հասակ իր Զատիկ տպաւորութիւնները ունի, իր խորհելու զգալու եղանակը։ Տղաքները իրենց նոր հագուստներով, իրենց նախուն հաւկիթներով, եկեղեցիին նուիրուած իրենց դպրոցական արձակուրդով կը հրճուին, երիտասարդներն ու երիտասարդուհիները՝ հմայքոտ, ցնցող բան մը կը զգան այս կրօնային տօնին զուգորդուող գարնան

ողջոյնէն. ու տարէցները կը զուարթանան, կը սիրտիւն իրենց յիշատակներով։

Զատիկ յիշատակները ամէնէն գեղեցիկները չեն միթէ կեանքի յիշատակներուն. ո՛չ մէկ անցած գացած ուրախութիւն, անհետացած տարիքի մը ո՛չ մէկ դրուագը այնքան կ'աղղէ սրտին ու մտքին վրայ՝ որքան հեռապատկերը մանկութեան ու պատանեկութեան Զատիկներուն, չէնչող, կայտառ, երջանիկ օրերու։ Ո՛վ չէ ունեցեր, տասնէն քսան տարեկան հասակին մէջ, միեւնոյն տենդագին յանձաբերութիւնը Աւագ Հինգշաբթիի չորս ժամերգութեանց վաղելու, ու նոյն տխրամածութիւնը՝ ցորեկուան սպիտակափառ խորանը իրիկուան սեւերով պատուած տեսնելով, որ դիւթական տեսիլքի մը, կրօնային հմայքի մը տպաւորութիւնը կը թողուն մատաղ մաքերու վրայ։ Ատեն անցնելէ վերջէն, որ երբեմնի երիտասարդը՝ հիմակ տարիներու բնուան ու կեանքի յոգնութեանց տակ՝ խորհրդանշան մը կը նկատէ այդ փոխակերպութիւնը իր կեանքի փոխակերպութիւններուն, դէպի ծերութիւն առաջնորդող դառնութեան ու մելամաղձութեան։ Ու իյժման իրիկունը, չըջապատուած զաւկըներէն, անոնց դէմքին վրայ կը կարդայ նոյն անխառն ուրախութիւնը զոր ինքն ալ ունեցեր էր այդ մանկական տարիքին մէջ, ժամէն վերադարձին։

Ինչպէս ընտանեկան յարկին տակ՝ այնպէս ալ ընկերային կեանքի ու յարաբերութեանց համար իր նշանակութիւնը ունի Զատիկը, շնորհաւորական այցելութեանց է՛ն ոգեւորեալ տօնը։ Բայց ամէնէն աւելի, բարեգործութիւնն է որ կուգայ միանալ բարեպաշտութեան՝ այս աւագ օրերուն մէջ։ Մեր

համայնքին տեղական ու գաւառային նիւթական պէտքերուն ու կարօտութիւններուն ամէն ժամանակ հասնող նպաստները, որոնք կը տրուին Պատրիարքարանի միջոցով ու կ'արձանագրուին լրագրութեան մէջ, չեն տկարացներ բարեգործելու այն եռանդը որ ի յայտ կուգայ Զատիկին, մասնաւորապէս աղքատիկ դրոցականները հազուեցնելու համար: Այս տարի մանաւանդ, աւելի՛ տարածուն ու բարեփոխուած ձեւ մը առաւ մանկութեան նուիրուած նպաստի այս գործը. — ո՛չ միայն ուրիշ տարիներէ շատ աւելի թիւով տղոց հազուստ չինուեցան, այլ հոգ տարուեցաւ նաեւ որ միօրինակ չըլլանանոնք՝ աղքատութեան դրոշմի մը պէս դեռատի դպրոցականները զանազանող իրենց ունեւոր հասակակիցներէն. մինչև իսկ Բերայի մէջ, տղաքը պատրաստ հանդերձեղինաց վաճառատուններ տարուեցան, իւրաքանչիւրի ճաշակին ու ընտրութեան համաձայն մէյմէկ ձեռք հազուստ նուիրուելով անոնց:

Երեւոյթը յատկանշանական է և բարձրու ազնուացում մը, բարեգործելու եղա նակին մէջ նրբութիւն մը ու փափկանկատութիւն մը ներմուծելու տրամադրութիւնս ցոյց կուտայ:

Տ. Ա.

ԶԱՏԻԿ—ՃԱՆՃԻԿԸ

(Ա.Ի.Ա.Ն.Դ.Ա.Վ.Է.Պ)

Շատ հին վէպիկ մը կը զրուցուի և զարմանքն այն է որ այս վէպիկն այնքան աղքեր է մեր հիններուն, որ առեր քրեր, ի դիր նշանակեր և արձանագրեր են հին ու մին Ոսկեփորիկներու կամ Յաճախապատումներու մէջ: Կ'ըսուի թէ Աղուեսագրքին մէջ ևս անթող ունի այս ընտիր և սիրուն վէպիկը:

Ո՞վ է այն ճանճիկը որ Զատիկական այս օրերուն մէջ կը թռչտի թուփէ թուփ, տերեւէ տերեւ, խոտէ խոտ, լուսիկ սփռելով շուրջը: Ինքն է պտղտիկ ու խառուտիկ: Հապա կեանքը, — Իրեն պէս, իր պոյին ու պօսին շափ կարճճուկ: Հաղիւ իրիկնամտին երբ լուսինը կը նշուլի, կամ արեւածագին, երբ արշալոյսը կը շողշողի, կ'երեւայ, կը թռչտի, կը ցատկոտէ, և ահա չկայ: Կեանքն ալ, լոյսն ալ այլ ևս մարած են, ինքն իսկ

այո՛ չկայ: Ո՞վ է այս. — Զատիկ ճանճիկն է, այս է ժողովրդեան խօսքն ամէն ուրեք, ուր կը հետապնդուի, կը բռնուի, ափերու մէջ կը դրուի և կը հմայուի մերիններէն, մասնիկներէն ու մանրիկներէն և թոյլ կը տրուի, որ թեւիկը բանայ, նորէն սուրայ սլանայ, այլ դէպ ո՛ւր. — ո՛ր կողմը սլանայ, կը հմայուի թէ այն կողմէն պիտի գայ բաղդը, յաջողութիւնը, և որ աւելի ևս ամէնուն իղձն է, հոգեզուարթ մխիթարութեան մը աւետիսը:

Ո՞վ է այս ճանճ. — Զատիկը. Ոսկեփորիկ կը պնդէ թէ Թագէի ճեսիլէն է, որ երուսաղեմէն բերեր ու մեր բուրաստաններուն կամ դալարագեղ պարտէզներուն մէջ նետեր է, որ ամէն Զատիկի մութն ու լուսուն լոկի մնջիկ թռչտի և սա դայլայլիկը լսելի ընէ իրր աւետիս, բզզայ տղզայ սուրբ կոյս աւանջներու. «Քրիստոս յարեալ»:

Իսկ Յաճախապատում կամ ժողովածու կը պնդեն թէ զրախտի այն հաւիկն է որ Նոյի տապանին մէջ առաջին անգամ հաւիկի մը ածեր է, զոր Նոյ գգուեր, պաղեր ու փայլայեր, ծոցիկն է դրեր, և ահա այս հաւիկի ծներ է ժժի մը, խառուտիկ սիրունիկ, պտղտիկ, որ լեզու է ելեր, աւետեր է Նոյի. «Քրիստոս յարեալ»: Նոյ ցնծացեր և խելայեղ եղեր և անուն է դրեր այդ ժժիկն — ԶԱՏԻԿ, իրր Աստուծոյ մէկ զան տուրքը, շնորհքը, իրեն և իրեններուն համար զուտ մէկ աւանդ ու յիշատակ:

Բայց Թագէի ի՞նչ որ այդ ժժիկն առեր բերեր է: Աղուեսագրքը կը պնդէ թէ այդ ժժիկն էր անճոռնի մէկ ճանճիկ, անողորմ և անգութ, որ բարկացած ըլլալով Աստուծոյ թէ ինչու այսքան տղեղ ու զաղիր ստեղծեր է զինքը, խայթոցը սրեր շտկեր ու աւեր կը գործէ եղեր, կը խայթէ մարդ ու անասուն, այնպէս որ ա՛լ մարդիկ ճարահպտած՝ այդ ճանճիկը դո՛ւ ընելու համար, անոր արձանը կը շինեն, կը տնկեն, կը պաշտեն: Զէ՞ք հաւատար, կարդացէք Սուրբ Գիրքը, ուր գրուած է. «Եւ անկաւ Ոքողիս ի վանդակապատէ վերնատանն իւրոյ ի Սամարիա և խօթացաւ եւ առաքեաց հրեշտակս և ասէ ցնոսա. «Երթայք հարցէք ի Բահաղ զճանճիկ Աստուծոն Աղիարոնի, թէ ասպրիցե՞մ ես յախտէ աստի յայսմանէ» [Թ. Թագ. Ա. 2—1]:

ԳԵՂԱՐՈՒԵՍ

—*—

Այլ յե'տոյ. — այս ճանճիկը, մարդերու ան-
շնորհք պատիւներէն տոնքացած, ա'լ աւելի
կը չարանայ և ահա օր մը կը տեսնէ որ արեւը
կէս օրին կը խաւարի և լուսինը արտում
տխուր կ'երեւի, խոր եւ ահաւոր լուսթիւն
մը տիրեր է ամէն ուրեք. կը տեսնէ որ մարդ
մը, ողորմուկ խեղճուկ, խաչուած ու անար-
գուած կը կողկողի կը մարմրի՝ այլ լուսերով
չըլտապատուած. կը կռահէ թէ մի՛ գուցէ Ան
ըլայ Մեսիան, կուռքերու կործանիչը,
ճանճիկը կը կատղի, կը զայրանայ, կը սրէ
կնճիթը, թեւատարած կը սուրայ, վեր կը
բարձրանայ, կը թռչտի խաչին շուրջ, որ
միտ խոթէ կնճիթը, թունոտ կնճիթը Անոր
ճակտին՝ որ դեռ կ'ապրէր, այլ ի գուր.
Կուռնիլիէ հարիւրապետ չթողուր, արգով
fcs fcs ընկելով կը վռնտէ վրէժը. կը կատղի
կը խոթէ կնճիթը միւս աչքը Կուռնիլիոսի
որ արդէն միականի էր, կը խլէ անոր այդ
միակ բաց աչքը: Այլ զարմանք, Հարիւրա-
պետը կատուած՝ կոյրվկոյրայն երբ կը տա-
ւանէր տէգը, որ այդ ճանճէն լուծէ վրէժը,
բայս կուգայ տէգը Յիսուսի կողին եւ ահա
արիւն կը ցայտէ ճիշդ Հարիւրապետի այն
աչերուն, որք կուրցած էին եւ կը բացուին
խոյն հրաշափառապէս: Ժօին դողահար
կ'երերտկայ, կըսթափի, այս հրաշքէն, սիրտ
կ'ընէ, թեւերը կը բանայ, կը սուրայ և Յիսուսի
կողի արիւնէն պտիկ մը սիրտ կ'ընէ խմել,
եւ ահա կը կերպարանափոխի եւ ձէնիկ մը
խաչէն կը լսէ, անուշիկ սա ձէնիկ. «Զարդն
ըլլաս գերեզմանիս, գունուղդ ու լուսովդ
ԶԱՏԻԿ, մէկ հատիկ զարդ»:

Այն օրէն ի վեր այդ ճանճիկն ամէն
Զատիկ մուծն ի լուսուն կ'երեւի եւ կը
թռչտի թուփէ թուփ, խոտէ խոտ, տերեւէ
տերեւ, լոյսիկ սփռելով շուրջն ու մօտը, եւ
մերկններէ կը բռնուի, կը պագնուի եւ ազատ
կ'արձկուի, որ աւետիս տանի սիրականներու
որք սրտէ եւ աչքէ հեռի կ'ապրին, թէ
«Քրիստոս յարեալ» եւ այդ սիրականները
տեսնեն զինքը, յիշեն զիրենք եւ իրենց ձայ-
նակցին թէ «յարեալ Քրիստոս»:

Այս է մեր Զատիկը — ճանճիկը, սիրունիկը,
խառուտիկը, պտրտիկը, թաղէի հեթիցիկը,
մեր մանրիկներուն ու մամիկներուն աչքի—
լոյսը: Եւ կը մաղթեմ որ վաղիւ ամէնքս
բարով վաղենք այդ Զատիկը — ժօին, եւ մեր
սուրբ Զատիկը. ամէն:

ՎԱՀՍՆ ՎԱՐԴ. ՊԱՐՏԻԶԱԿՅԻ

Օրաթերթերը, վերջին շաբաթներուս մէջ
համակրական տողեր նուիրեցին տաղանդա-
ւոր նկարիչ Պ. Վարդան Մախոխեանի, որուն
կազմակերպած նկարահանողէսը՝ Եգիպտոսի
մէջ՝ նոյն ընդունելութիւնը կը գտնէ ինչ որ
գտաւ արդէն Պէրլինի մէջ: Ծանուցուեցաւ
միանգամայն թէ Գահիրէի ու Աղեքսանդրիոյ
Ֆրանսերէն թերթերը՝ երիտասարդ հայ նը-
կարչին վրձինը գնահատող յօդուածներ հրա-
տարակած են: Պ. Մախոխեան, նախորդ
շաբթուն, իր պատկերահանողէսը փոխադրեր
է Աղեքսանդրիա ուր նոյն ջերմ ընդունե-
լութիւնը կը գտնէ:

Ինչպէս Արեւելի մէջ հրատարակուած
թղթակցութենէ մը երեւցաւ անցեալները,
Պ. Վարդան Մախոխեան դործօն անդամ
անուանուած է Պէրլինի Արդիսդներու Ըն-
կերակցութեան ուր այնքան դժուարաւ մուտք
կը գտնեն օտար արուեստագէտները: Սիրելի
աշակերտը նշանաւոր նկարիչ Էօփէն Պրախթի՝
Պ. Մախոխեան մեծապէս օգտուած է անոր
դասերէն և իր բնածին կարողութեան միա-
ցուցած յամառ աշխատութիւն՝ իր վարպե-
տին անուան պատիւ կը բերէ:

Այս անգամ, Եգիպտոսի մէջ իր կազմա-
կերպած ցուցահանողէսը կը բաղկանայ 60
նկարներէ, առանց հաշուելու իր վրձինին
արդիւնք եղող կիսաւարտ գործերը որոնք
պզտիկ թիւ մը չէ որ կը կազմեն: Միակ
արուեստագէտի մը նկարները քիչ անգամ
այնքան պէսպիսութիւն կընծայեն որքան
ներկայ պարագային մէջ: Ծով, քարաժայռ,
դաշտանկար, քաղքի տեսարան, — իր վրձի-
նին տակ ամէնքն ալ առանձնայատուկ
չահեկանութիւն մը ունին. իր նկարներուն
մէջ արուեստականութիւն չիկայ, այլ բնա-
կանութիւն: Երիտասարդ նկարիչը իր վրձինը
չի գործածեր՝ ժողովուրդին ճաշակը գգուելու
համար՝ պոռոտ գոյներով ու խիստ նկարու-
մանով, այլ իրականին միայն հետամուտ է
և իր անձէն ու հոգիէն բան մը խառնած է,
— կ'ըսեն, — իր նկարումներուն մէջ:

Գ Պ Շ Ե Ր Ն Ե Ր Ը...



Հիւժաւորին պտոյտը դեռ կը տեւէ,
Թմբիններուն ճամբուն քովերն ու վրան;
Մերժումները, ա՛հ, ամէնքն ալ գիշերուան
Այս ժամուն մէջ կը կատարուն գրեթէ:
Դեռ չը փարած՝ անոր դգուող մարմինն
Շուարումը կը պաշարէր զիս նորէն...
Լոյսին ցայտքը կը դժգունի մեղմօրէն
Մութին մէջն է որ միշտ վրադ կը խորհիմ:
Մաշկոյն կասկածները, յուշքին պէս,
Դիշերներն են որ միտքիս մէջ կը զարթնուն.
Դիմաստուերըդ ա՛լ չնայիր ետեւէս:
Քեզ յիշելէ դեռ չդադրած, այս գիշեր,
Առջի անգամս ըլլալով՝ ցուրտ, սարսըռուն
Սիրոյ մութին մէջն ապրեցայ մահաբեր:

ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ

Ե Ր Կ Ո Ր Բ Ն Ա Յ Ո Ղ Ն Ե Ր Ը



Մամիկը նստած է բազկաթոռի մը մէջ խոշոր,
Ու համեստ կրակը ճարճատուն՝ կը բոցավառի.
Անոր քով կծկըտած էգ կատու մը մեծ գունաւոր,
Պսպղուն ու անթարթ նայուածքով բոցին կը յառի:
Ծեր կինը կը խոկայ մէկ տունին վրայ Սուրբ Գիրքին,
Որ անոր ծունկերուն վերայ կը փռուի լախաբաց:
Կատուն՝ շեղագիծ իր կոպը կը պարզէ հեշտագին,
Քթթելով իր կանանչ աչքը, կիսովին քնայած:
Ու մամիկն ալ անանկ, տակաւ մտասոյդ, բայց ըմբոստ,
Զուր ջանքերէ ետքը, Սուրբ Գիրքին վրայ, յամբօրէն,
Խորշոմած ճակատը կը հակէ, կարթըննայ ընդոստ,
Ու կրկին անձնատուր, քունի մէջ կը թաղուի նորէն:
Կինը կը ժպտի, էգ կատուն ալ սարսուղներ կը դգայ.
Երկուքն ալ կ'երազեն ու կերերտըկան փակաչուի.
Կատուն երգիքին տակ կը կուռի, նոր հունձքի՝ կուգայ.
Կինը երկինքին մէջ, Աստուծոյ հետ կը տեսնուի:
Ու հին ժամացոյցը պատին վրայ կը ճօճէ անդու,
Մարդկային կարճատեւ քունին ժամերը չափելով.
Ու միայնակ՝ խորունկ լուութեան մէջէն, ան իր խուլ
Ազմուկով, միշտ առաջ կերթայ, անսպաթաք, անվրդով:
Թարգմ. ԶԻՅԹԷ ՍԱՐԱՅ.

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Անթիլ հեռագրին մէկ նոր դրութիւնը. — Ն. 1 ցուցիչ (մէկ) նաւագայքներ. — Ն. ճաւագայքներուն փոխադրութիւնը առասանքի մը միջոցաւ. — Ն. ճաւագայքները աղի եւ անուռ ջուրներուն մէջ:

Նախորդ յօդուածի մը մէջ, երբ Մասիսի ընթերցողներուն կը ներկայացնէի Անթիլ հեռագիրը, խոստացած էի ծանօթացնել նաեւ ուրիշ նորագոյն դրութիւն մը՝ գործադրութեան դրուած Անթիլ հեռագրին մէջ:

Յարդ մեզի ծանօթ հեռագրական զանազան դրութիւններուն մէջ, կար նաեւ Տետղական հեռադիրը (télégraphie optique) զոր կը գործածէին կարճ հեռաւորութիւններու համար, օրինակ՝ ծովու վրայ պատեւրազմական նաւերու միջև և յամաքի վրայ երկու բանա՛ններու մէջ: Այս տետղական հեռագրով լուր ղրկելու համար՝ երկու կայարաններու մէջ ալ կը գտնուէին մէյմէկ աշտարակիկ, որոնց մէկուն զագաթէն լոյսի ցոլացումներ կը կատարուէին, այնպէս որ ընկալուչ աշտարակէն մարդիկ աչքով կրնային հասկնալ այդ ցոլացումներուն զանազան նշանակութիւնները. վասն զի անոնց զանազան դիրքերը պայմանադրական կարգ մը նշաններ էին: Այս դրութիւնը սակայն անգաղտնապահ ըլլալու անպատեհութիւնը ունէր. լուսոյ այդ ցոլացումներուն զանազան դիրքերը կրնային երրորդներու ալ ծանօթ ըլլալ և անկարելի ընել գաղտնի հաղորդակցութիւնը:

Վերջերս, անթիլ հեռագրի դիւտէն ետքը, Գերմանացի մը՝ Խիւհմէր, նոր դրութիւն մը յղացաւ. Այս այն դիւտէնն է, որ գեղեցիկ փորձեր կատարեց Անթիլ հեռախօսին (téléphonie sans fils) վրայ. Խիւհմէրի դրութիւնը հետեւեալն է. հաղորդիչ կայարանին մէջ ելեկտրական մշտատեւ հոսանքի մը հետ կապուած է լամբար մը (ելեկտրական), որ կը գտնուի ցոլացուցիչի (projecteur) մը վառարանին (foyer) ճիշդ ետին:

Լամբարին կապուած հոսանքին վրայէն ուրիշ ելեկտրական հոսանք մըն ալ կ'անցնի, որ պաշտօն ունի՝ քնդհատիչ (interrupteur) մասնաւոր մեքենայի մը միջոցաւ՝ յաճախակի եւ կատարեալ արագութեամբ ընդհատել առաջին հոսանքը եւ այսպէսով լամբարին մէջի ելեկտրական լոյսը ստէպ ստէպ կը մարի ու կը վառի: Այս մեքենական կազմածը կարելի է՝ ուղղուած ժամանակ միայն բանեցնել, (հօգ չէ թէ հոսանքները մշտատեւ եղած ըլլան) Մոռսի բանալիին միջոցաւ: Հետեւաբար, ա'լ հեռագրալուր մը զարնել չիւրին է՝ Մոռսի բանալին գործածելով՝ Մոռսի հեռագրական այբուբէնին համաձայն:

Երկու մշտատեւ հոսանքները լամբարին լոյսը կը զօրացնեն. ընդհատիչ մեքենան իր դերը կը կատարէ և ցոլացուցիչը՝ լամբարէն ընդունած առաւել կամ նուազ երկար, քնդհատեալ լոյսերը կը ցոլացնէ դէպ ի ընկալուչ կայարանը:

Ընկալուչ կայարանին մէջ կայ զուգորդած (1) ցոլացուցիչ մը (reflecteur parabolique), ճիշդ փարոսներուն մէջ գտնուածին նման. այս ցոլացուցիչն վառարանին դէմ զետեղուած է Սէլէնիումէ (2) (selenium) ելեկտրական բարդ մը: Հաղորդիչ կայարանէն ղրկուած լուսեղէն ընդհատ ճառագայթները,

(1) Զուգորդած (parabolique) կը կոչուի այն կոր գիծը, զոր կը յօրինէ օդին մէջ նետուած քար մը՝ իր վար ինկած ժամանակը:

(2) Սէլէնիումը պարզ մարմին մըն է, որ ծծումբին (քիւքիւրթ) կը նմանի և անոր յատկութիւնները ունի մօտաւորապէս. բնութեան մէջ՝ ծծումբին և կամ կարգ մը մետաղներու հետ միացած վիճակի մէջ կը գտնուի: Սէլէնիումը իր բիւրեղացած վիճակին մէջ ելեկտրականութեան լաւ հաղորդիչ է. բնական կամ ելեկտրական լոյսի ազդեցութեամբ՝ իր հաղորդականութիւնը մեծ համեմատութիւններ կ'առնէ. իր այս հետաքրքրական յատկութեամբը օգտուեցաւ Ամերիկացի հռչակաւոր դիւտէնը, Պէլ և (phonophone) լուսախօս գործիքը չինեց, ձայները՝ լուսեղէն ճառագայթներու միջոցաւ տեղէն մը ուրիշ տեղ փոխադրելու համար:

ընկալուչ կայարանին մէջ կ'ընդունուին նորէն Սէլէնիոմէ շինուած հեռախօսին (téléphone) միջոցաւ և հոն մարդուն ականջին լսելի կ'ըլլան՝ իրարմէ առաւել կամ նուազ ընդհատ ձայնական քրքումներ, որոնք, ըստ Մոուսի հեռագրական այբուբէնին, կէտի կամ գիծի մը երկարութեան չափ տեւողութիւն ունին։ Հաղորդակցութեան սկզբնաւորութիւնը դարձեալ Սէլէնիոմին միջոցաւ բանող ելեկտրական զանգակով մը կ'աղդարարուի երկու կայարաններու մէջ՝ փոխադարձ կերպով։ Կը տեսնէ՞ք, սա լուսեղէն ճառագայթները ինչ գործեր կը տեսնեն։ Անթել հեռագրի այս նոր դրութիւնը քանի մը առաւելութիւններ կը ներկայացնէ։ 1.—Հաղորդիչ կայարանէն ցոլացած ընդհատ լոյսերը, որոնց փոփոխութիւնը ամենալոյս արագութեամբ կը կատարուի, կարելի չըլլար մարդկային պարզ աչքերով զանազանել։ Վասն զի, մէկ երկվայրկեանի մէջ 8000 անգամ անգամ շրջադարձ կ'ընեն իրարու և անոնց արագութիւնը պատճառ կ'ըլլայ որ մարդուն աչքը լուսոյ շարունակական շառաւիղի մը պատրանքը ունենայ։ Միւս կողմէն սակայն ձայնական քրքնացումները որոշակի կը լսուին Սէլէնիոմի հեռախօսին մէջէն։ 2.—Հեռախօսի դերն ալ կը կատարէ այս դրութիւնը։ Հեռախօսին մէջ մարդկային ձայնը կրնայ երբեմն անհասկնալի ըլլալ և անճշտութեանց տեղի տալ լսող կայարանին։ 3.—Մթնոլորտական զանազան պայմաններու մէջ, երբ խոսքին փոխադրութիւնը դժուար ըլլայ և կամ խառնակութիւններ տեղի ունենան, այս նոր դրութեան շնորհիւ կը վերնանայ անսլա տեխնիկաները և յստակ ու կատարելապէս հասկնալի հաղորդակցութիւններ կրնան կատարուիլ՝ անօրինակ ճշտութեամբ։

Կը տեսնուի ուրեմն որ, այն մետաղը, Սէլէնիոմը, որուն թերեւս այսչափ կարեւորութիւն չորուէր քիմիական աշխատանոցին մէջ, իր մէկ հետաքրքրական յատկութեամբը գեղեցիկ արդիւնքներ կը խոստանայ։ Ռիւհմերեան դրութիւնը յաջողած է կատարելապէս՝ կարճ հեռաւորութեանց համար առայժմ։ Իր հիմակուան վիճակէն, մեծապէս

պիտի կրնան օգտուիլ սակայն՝ բանականներու պատերազմական նաւերը՝ թշնամիէն զաղտնի լուրեր փոխանակելու գործին մէջ։

* * Ն. ցուցիչ I հառագայթներ. — Մասիսի 10րդ թիւով, երբ Ն. ճառագայթներուն վրայ կը խօսէի, կ'ըսէի թէ Ի. դարը ճառագայթներու դարն է և քիչ օրէն դեռ չեմ գիտեր ի՞նչ ճառագայթներ ալ պիտի ելլեն։ Դիտական չաքածութեթ մը կը ծանուցանէ թէ Պ. Պլոնտլօ, նոր տեսակ ճառագայթներ մը գտած է, որոնք Ն. ճառագայթներուն մէկ նոր տեսակն են և իրենց յատկութիւններով բոլորովին հակապատկերը կը կազմեն Պլոնտլօի ճառագայթներուն։ Պ. Պլոնտլօ այս նոր գիւտը կոչած է Ն 1 (ն ցուցիչ 1) ճառագայթներ (Rayon N 1), որոնք փոխանակ լոյսի մը տկար նշոյլը զօրացնելու, ընդհակառակը, անոր փայլը կը նուաղեցնեն, տեւողութիւնը սրելու տեղ՝ կը բթացնեն։ Ճաշակելեաց և լսելեաց զգայարաններուն գործունէութիւնը կը տկարացնեն։ Մանրամասնութիւններ կը պակսին. այս մասին ըլլալիք նորանոր աշխատութիւնները ժամանակին կը խոստանամ ծանօթացնել Մասիսի ընթերցողներուն։

* * Ն. ճառագայթներուն փոխադրութիւնը. — Պ. Օկիւսթէն Շարբանթիէ, Պ. Պլոնտլօյի ձեռնհաս աշխատակիցը, նոր աշխատութիւն մը ըրած է Ն. ճառագայթներուն փոխադրելիութեան վայ։ Կ'ըսէ թէ մարմնէն բխող Ն. ճառագայթներուն փոխադրութիւնը կարելի է կատարել մետաղական թելի մը միջոցաւ։ Քանի որ ապակին, փայտը, և ուրիշ մարմիններ (որոնց վրայ խօսուած է մեր նախորդ յօդուածին մէջ) մեկուսացնող հանգամանք մը ունին Ն. ճառագայթներուն նկատմամբ, կարելոր դեր մը կը խաղան ուրեմն, զանոնք փոխադրելի ընելու գործին մէջ։ Պ. Պիշա, որուն հաղորդուած էր այս երեւոյթը, մասնաւորապէս ուսումնասիրելով անոր հետաքրքրական կողմերը երեւան հանած է։ Արծաթի և կամ պղնձի թելերով կատարած է Պ. Պիշա իր փորձերը՝ լուսափայլութեան մէջ բղխած Ն. ճառագայթները փոխադրելով։

Իսկ Պ. Օ. Շարբանթիէ, որ այս խորհրդաւոր ճառագայթներուն օձիքէն բռնած ըլլալ կը թուի. զանոնք փոխադրած է առասանի մը (սիմիմ) միջոցաւ, որ ուղղուած երկայնութիւնը կրնայ ունենալ: Այս առասանը թրջուած է լուսափայլ ծծմբուկ կրածնիով և collodiumի լուծուածով: Երբ առասանին մէկ ծայրը Ն. ճառագայթներ բղխող մարմինի մը վրայ դնենք, առասանը իր բոլոր երկարաձգութիւն մէջ կը փափլի և իր վրայ լուսեղէն ալիքներ կը գոյանան, որոնք պարզ աչքով կրնան տեսնուիլ առաւել կամ նուազ յաջողութեամբ: Կ'ըսուի թէ այս լուսափայլ առասանին տարբեր ձեւեր կրնայ արուիլ՝ մարդուն մարմինէն բղխած Ն. ճառագայթները ուսումնասիրելու գեղեցիկ միջոց մը ընելով զայն:

Ն. ճառագայթները աղի եւ անուշ ջուրերուն մէջ.— Յաճախ հետաքրքիր եղած են գիտունները հասկնալու համար թէ ինչո՞ւ աղի ջուրի մէջ ապրող կենդանիները անուշ ջուրին մէջ չեն ուզեր մտնել և եթէ մտնելու ըլլան՝ պէտք եղածին պէս չեն ապրիր անոր մէջ: Շատ մը պատճառներ ցոյց տրուած են այս մասին, սակայն Պ. Պօն, իր մէկ ուսումնասիրութեան մէջ, զոր ներկայացուցած է այս տարի կենսաբանական ընկերութեան, կ'ըսէ թէ, Ն. ճառագայթներուն բացակայութիւնն է անուշ ջուրին մէջ:

Արեւուն շառաւիղներուն մէջ գտնուող Ն. ճառագայթները ծովու ջուրին մէջ կը թափանցեն և հոն կը լեցուին. մինչդեռ ամենափոքր քանակութեամբ անուշ ջուրը բացարձակապէս կ'արգիլէ անոնց անցքը: Ն. ճառագայթները, լուսեղէն սովորական ճառագայթներուն ներկայութեանը, կենդանիներուն տեսողութիւնը կը զօրացնէ. պարզայ մը՝ որ կարծել կուտայ թէ Ն. ճառագայթները մեծ դեր մը կը խաղան՝ ծովային կենդանիներուն ապրելու միջավայրին վրայ:

Նէրէիտ (néréide) կոչուած կենդանին, որ անուշ ջուրէն ելլելով աղի ջուրին մէջ անցնելու կարողութիւնը ունի, իր տեսողութիւնը գրեթէ բոլորովին կը կորսնցնէ, կ'ըսէ

Պ. Պօն, երբ դարձեալ անուշ ջուրին մէջ վերադառնայ. ասկէ զատ անմիջապէս անուշ ջուրին յատակը կ'իջնէ և հոն կը մնայ:

Կենթադրուի ուրեմն որ Ն. ճառագայթներուն չգոյութիւնը անուշ ջուրէն աղի ջուրը մտնելու պարագային մէջ՝ անանկ արդիւնքներ առաջ կը բերէ որ անկարելի կ'ըլլայ գործել վերստին անուշ ջուրին մէջ՝ ծովու մէջ վարժուած գործարանաւորութեան մը համար: Հետեւաբար ծովային կենդանեաց adaptationին վրայ կ'ազդեն Պլոստլոյի խորհրդաւոր ճառագայթները:

ՆՈՒՊԵՐ

ԿԵՕԹԵ ԵՒ ԼՈՐՏ ՊԱՅՐԸՆ

(Էջ ՄԸ ԹԷՆԻ “ԱՆՌԻ. ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ”-ԷՆ



Դիւթիչ ու վսեմ քերթուած մը ունի Պայրն, Manfred, դարուն մեծագոյն բանաստեղծութեան, Կէօթէի Ֆաուստին երկուորեակ-եղբայրը: Կէօթէ կ'ըսէ Պայրնի մասին.—

«Այս եղական, իմացական բանաստեղծը իմ Ֆաուստս իւրացուցած է և անկէ քաղած է է՛ն ուժեղ սնունդը իր մեղամաղձոտ հումորին: Ուղածին պէս գործածած է յառաջ մղող սկզբունքները նպատակներուն համար, և լոկ ասոր համար չեմ կրնար պէտք եղածին չափ հիանալ իր վրայ»: Պայրն կը գրէ.— «Իր (Կէօթէի) Ֆաուստը երբեք չեմ կարդացած, որովհետեւ գերմաներէն չեմ գիտեր: Բարեկամս բերանացի թարգմանեց ինծի անոր մեծ մասը, և բնականաբար շատ ազդուեցայ»:— Ու Կէօթէ կը յարէ. «Ամբողջութիւնը այնքան կատարեալ կերպով յօրինուած է նորէն որ քննադատին ազուր գործ մը պիտի ըլլար ցոյց տալ ոչ միայն իր ըրած փոփոխութիւնները, այլ՝ անոնց նմանութեան աստիճանը, տարբերութիւնները՝ ինքնատիպէն»: Խօսինք անոնց մասին, հանգստորէն. նիւթը դարուն տիրող գաղափարն է, արտայայտուած՝ պարզելու երկու վարպետներուն և երկու ժողովուրդներուն հակասեղանութիւնը: Կէօթէ

Ինչ որ Կէօթէի փառքը կը կաղմէ, տասներիններորդ դարուն դիւցազներգութիւն մը արտադրել կարենալն է, այսինքն՝ քերթուած մը որուն մէջ հարադատ աստուածներ կը գործեն ու իը խօսին: Ասի՝ անկարելի թուեցաւ տասներիններորդ դարուն, քանի որ մեր դարուն գործն է նկատի առնել նրբութեամբ ստեղծուած գաղափարներն ու խորշիլ այն բանաստեղծական նկարագիրներէն որոնցմով ուրիշ դարեր այդ գաղափարները ներկայացնելու մէջ չեն տկարացած:

Յոյն և Քրիստոնեայ, — երկու աստուածային ընտանիքներէն ոչ մէկը դիւցազնական աշխարհը մտնել կարողացաւ: Դասական դրականութիւնը իր անկումին մէջ ետեւէն քաշած էր դիցաբանական իր պուպրիկները և վաղեմի չաստուածները քնացան իրենց ծեր Ոլիմպոսին վրայ ուր պատմութիւնն ու հնագիտութիւնը միայն կրնային երթալ դասոնք արթնցնելու:

Միջին Դարու հրեշտակներն ու սուրբերը, աֆիքան օտարացած ինչքան հեռու, կը նիրհէին իրենց մագաղաթ թերթերուն և կաթողիկէներու բառուցներուն մէջ, ու եթէ Շաթոպրիանի պէս բանաստեղծ մը փորձեց զանոնք արդի աշխարհը մտցնել, լոկ յաջողեցաւ զանոնք վատթարացնել զարդարանքներու և ռեքրայական մեքենաներու գործածութեան մէջ: Դիցաբանական դիւրահաւատութիւնը անհետացած էր փորձառութեան աճումով և խորհրդաւոր՝ զարգացումի չափանալով: Հեթանոսութիւնը, գիտութեան հետ չիման գալով, բնական գորութիւններու ճանաչումին վերածուեցաւ: Քրիստոնէութիւնը, բարոյականի հետ չիման գալով՝ վերածուեցաւ խաբանիս պաշտաման:

Որպէս զի նորէն աստուածացուին ֆիզիքական ուժերը, մարդ անգամ մըն ալ փոխակերպուելու է Հոմերի ժամանակին աւողջ տղուն: Որպէս զի նորէն աստուածացուին հոգեկան գորութիւնները, հարկ է որ մարդ անգամ մըն ալ գառնայ ըլլայ հիւանդոտ տղան Տանդէի ժամանակին: Բայց ան՝ չափահաս էր և ա՛լ չէր կրնար հասնիլ այն քաղաքակրթութիւններուն կամ դիւցազնու-

թիւններուն որոնցմէ իր խորհուրդին ու գոյութեան հոսանքը վտարած էր զինք յաւիտենապէս: Ինչպէս ցոյց տալ անոր իր աստուածները, հիմակուան աստուածները, ինչպէս հագուեցնել զանոնք, իրեն համար, անձնական ու շօշափելի կերպարանքով մը, քանի որ ամէն շօշափելի, ամէն անձնական կերպարանքէ զանոնք կապուելու համար էր որ ճգնած ու յաջողած ալ էր ինք: Կէօթէ հեքեաթը մէկդի թողլու տեղ, նորէն ձեռք առաւ. Միջնադարեան պատմութիւն մը ընտրեց իր նիւթին համար: Ուշադրութեամբ, խղճահարութիւնով հետապնդեց հին սովորոյթներն ու հին հաւատալիքները. — տարբարանի մը աշխատանոցը, վհուկի մը հմայութեան գիրքը, անտաշ գեղջուկներ, ուսանողներու կամ գինոյներու զուարթութիւնը, կախարդութիւններու ժողով մը Brockenի մէջ, պատարագ՝ եկեղեցին, կրնաք երեւակայել թէ կը տեսնէք Լուտերի ժամանակին մէկ փորագրութիւնը գիտակից և մանրակրկիտ:

Ոչինչ զանց առնուած է: Երկնային նկարագիրները նուիրական դիրքերու մէջ կ'երեւին, Ս. Գիրքերու պատմութեան համեմատ, հին խորհրդաւորութիւններուն պէս. — Յիսուս իր հրեշտակներով, ետքը՝ սատահային հետ որ կուգայ հրաման խնդրել Պաուլոսը փորձելու համար, ինչպէս երբեմն փորձած էր Յորը. Երկինքը՝ ինչպէս Ս. Պրանսիս երեւակայեց ու Վան Տայք նկարեց, իր ճգնաւորներով, մաքուր կիներ ու վարդապետներ — ոմանք՝ կապուտակ — գորշ ժայռերով շրջանակուած դաշտավայրի մը մէջ, ուրիշներ՝ վերը վսեմ օդին մէջ, Կոյսը բոլորած, անհունօրէն անսահման կը տատանին խմբակներով: Կէօթէ իր ամէն մէկ լատիներէն անունին տակ կը գրէ նաեւ Վուլկադաի(*) մէջ իր սեփական անկիւնը. ու նոյն իսկ այս հաւատարմութիւնը զինքը սկեպտիկ մը կը յայտարարէ: Կը տեսնենք որ, եթէ կը վերակենդանացնէ իսկ հին աշխարհը, իբր պատմաբան մըն է որ կ'ընէ, չէ թէ իբր հաւատացեալ մը: Քրիստոնեայ

(*) Ս. Գրոյ լատին թարգմանութիւնը:

Դիսեդ քափող թոյլ վարսեր,
Անուռ պչրանեդ այդ կոյսի,
Մարմնեդ ծորող գրգռս սեռ՝
Ես կանուխեմ սիրեցի:

Սրտիդ զարկերն, տո՛ւիմ այ՝
Նուիրական եմ ինձի.
Անո՛նց համար զոհ երթալ՝
Ես կանուխեմ սիրեցի:

Թո՛ղ տալ սիրոյս անպայման
Ուր սրտիդ խո՛ւրն բնկզմի՝
(Ի՛նչ ցանկալի գերեզման,)՝
Ես կանուխեմ սիրեցի:

Նրզել Բու սերդ յաւիտեան,
Հրապոյրներդ կանացի,
Ներեցնչուիլ Բե՛զմով միայն՝
Ես կանուխեմ սիրեցի:

Պարսիզակ

ՎՆՈՒԿ

ԱՅ ԱՅ ԱՅ ԱՅ ԱՅ

Ամպ որքան քլլաւ մութ ու սեւ
Ունիս պահած դուք Բու ներքեւ
Պայծառ ու փայլուն մի արեւ:

Հոգիս որ տխուր ես յաւեհ
Ու չես զատուիր Բու վիշտերեդ
Ունի՞ս գոնե ամպին պէս դուք,
Արեւ մ'եթիդ. պայծառ, փայլուն:—
Բերա

Ն. Ե. Վ.

ՏԵՐԵԻՆԵՐԸ

Պարտէզին ամէն կողմը ցանցնուած, իսկ
ծառուղիներուն վրայ դիզուած են անոնք,
Թափուող տերեւները, անթիւ, անհամար,
ու քայլերուս տակ խշրտուքով մը կը փչրուին
պտտած ատենս: Ու դեռ, ծառերուն տակէն
անցած ատենս, հովը—որուն մէջ աշնան
սարսուռը կայ այլեւս—տերեւի ցանցառ անձ-
րեւ մը կը տեղացնէ գլխուս:

Ասոնք այն միեւնոյն տերեւներն են սա-
կայն՝ որ զարնան ու ամրան՝ պարտէզին
հրապոյրը, ծառերուն զարդն ու պերճանքը,
ամառնային արդուզարդը կը կազմէին: Եղա-
նակը կը փոխուի և ինչնան հիմա, կծկուած,
ճրմրթկած, տձեւ, դժգոյն ու կարկամ: Ասոնք
ճիշդ այն տերեւներն են՝ որոնց կեանքոտ
կանանչը զարնան անձրեւէն ետքը, ա՛լ ա-
ւելի մաքուր, ա՛լ աւելի վառ ու փայլուն
մեղանուշ ժպիտ մը կ'առնէր ու հմայք կը
սփռէր ամէն կողմ. մինչդեռ հիմա աշնան
տխուր, լալկան անձրեւը ծանր ծանր, կաթիլ
կաթիլ կը ճնշէ իրենց վրայ, վար կը թափէ,
ցելիւն ու տղմին մէջ կը փակցնէ, կը թաթ-
խէ ու կը փճացնէ այդպէս գետնաքարոյ ու
մոռցուած:

Մայրերնին—ծառը—որ իրենցմով կը
հրճուէր ու կը փառաւորուէր դեռ երէկ՝
այսօր կը ցնցուի ու վար կը թօթուէ զի-
րենք: Ի՛ դուր իրենց վտիտ, անջիղ ցողուն-
ներով կ'ուզեն կառչիլ անոր, ո՛չ, ան չու-
զեր այլեւս զիրենք: Որքան ատեն որ առ-
ոյգ էին, աղէ՛կ, կը սիրէր ու կը հպար-
տանար անոնցմով. բայց հիմա որ հիւժած են,
կեանքի չըջանը անցուցած. հիմա որ մահուան
չորցնող թալուկը եկաւ դրաւեց զիրենք
աշունին հետ, լմնցա՛ւ, ալ չուզեր, պէտք
է որ խամրին. ճակատագրային է ասիկա,
ծառը որ կենդանի է՝ չկրնար մեռած
տերեւներու հետ ապրիլ: Եւ ինք պիտի չա-
րունակէ ապրիլ՝ նորերու կեանք տալու հա-
մար յաջորդ գարունին: Բնութեան օրէնքը՝
Լըրեւ մայր՝ առանց վշտի չէ որ պիտի տեսնէ
անոնց ինչալը. ո՛հ, ձմեռ մը՝ ամբողջ իր մերկ

ոստերը ձիւնին ու փութին ենթարկած պիտի ողբայ, տխուր պիտի ըլլայ, հիւսիսի կատաղի հովին հարուածներուն տակ սուլումներ և վայրի մոնջիւններ պիտի արձակէ, պիտի թմրի. բայց բնութեան օրէնքը այդ վշտին ու սուգին համար ալ չըջան մը ունի: Գարունը պիտի դայ դարձեալ. կասոյտ երկինքը պիտի ցոլայ գլխուն վերեւ, ջինջ ու անամպ, արեւը տաք ցոլքերով պիտի ժպտի դարձեալ. երակներուն մէջ հիւթը արագ չըջան պիտի սկսի ընել, նոյ տերեւներ ծիւ պիտի արձակեն ու ինկող տերեւները պիտի մոռցուն երթան: Անկումին ետին մոռացում, ուշ կամ կանուխ, տարբերութիւն չընէ:

Ձոր տերեւներով լեցուած ցամաք առուակի մը առջեւ կը կենամ ու իմ մարդու գաճաճ բարձրութենէս արհաւիրահանքով և արգահատանքով խառն նայուածք մը կ'ողդում այդ անկեանդան, հինցած նետուած սընդուսէ կտորներուն:

— Սեղծ տերեւներ, կը մեղքնամ ձեզի. գարուն մը, գա'րուն մը միայն ապրեցաք և ահա կը փճանաք. կը մոռնան ձեզի: Ձեր ճակատագիրը աս է և ես՝ որուն համար մոռցուիլ չկայ, ձենէ տարբեր, ձենէ վեր էակ՝ կը մեղքնամ ձեզի, արգահատանքս կը շարժէք. բայց ի՞նչ ընենք, բնութեան օրէնք. մեր բաղդերը տարբեր են:

Ո՞ր խշրտաւք մը կընդհատէ զիս: Հովի յանկարծական հոսանքէ մը մղուած այդ չոր տերեւները հողին վրայէն վեր կը ցատկեն, անգիտակից խենդ պար մը կըսկսին դառնալ օդին մէջ, դարձեալ ծիւ, խառն ի խոռոն, ոլորապտոյտ, անկանոն ելեւջներով ու կայտաւանքներով:

Ո՛հ չարածձիններ, այդ ցատկատուքով, այդ աններդաշնակ իւրտուքով կը ծաղրեն կոր զիս, իրենց հեղնանքը կը նետեն կոր երեսիս մարդկային ինքնապատան արգահատանքիս ի պատասխան: Իրենց խնդուքն է ատիկա, կը փախչիմ:

ՓԱՅԼԱԼ

ԽՄԱՌԱՐԱՐԱՆ ՆՕՐԵՐ

Կայս. ճնորհ:—Դատական նախարարութեան կողմէ Պատրիարքարան ուղղուած պաշտօնագիր մը հաղորդած ըլլալով թէ վեհ. Սուլթանը բարեհաճած է 50,000 զրշ.ի գումար մը շնորհել Պատրիարքարանին, Չատկի տօնին առթիւ, Ս. Պատրիարքը շնորհակալութեան ուղերձ մը կը մատուցանէ յօստ Կայս. Գահոյից:

Պատրիարքարանի պաշտօնական մէկ յայտարարութիւնը կը ծանուցանէ թէ Ս. Պատրիարք Հայրը՝ Չատկի շնորհաւորական այցելութիւնները պիտի ընդունի նոյն տօնին երկրորդ օրը, երկուշաբթի, 29 մարտ, ժամ 7ին Պատրիարքարանի մէջ: Իսկ Չատկի հինգշաբթի օրը Ն. Սրբազնութիւնը պիտի ընդունի մայրաքաղաքիս վարժարաններու ուսուցչական մարմիններուն և աշակերտաց ու աշակերտուհեաց ներկայացուցիչները, ժամ 7ուկէսին, Պատրիարքարանի մէջ:

Հեռեքիկ հօնա (Ռէթէոս էֆ. Գրիգորեան) հանրածանոթ ու ծերունի տաճկաբանը, որ քաջահմուտ էր թուրքերէնի և արաբերէնի, մեռաւ նախընթաց օր՝ իր բնակարանին մէջ, Գում-գաբու, և յուղարկաւ որութիւնը կատարուեցաւ Մայր Եկեղեցին: Հանգուցեալը կէս դարու դասախօսութեան չըջան մը ուսնեցած է, հասցնելով բազմաթիւ աշակերտներ որոնցմէ ոմանք պետական ծառայութեան և ուսուցչական ասպարէզին մէջ կը գտնուին և գնահատուած է իրենց հմտութիւնը թուրքերէն լեզուի: Հէրէթիկ Հօճա հեղինակած է բաւական թուով դասագիրքեր՝ թուրքերէնի և արաբերէնի ուսուցման համար: Մայր Եկեղեցւոյ Թաղ. Խորհուրդի անտուկէն 80 զրշ.ի ամսական մը յատկացուած էր այս բազմավաստակ ուսուցչին որ քառասուն տարի դասախօսած է մայր վարժարանին մէջ:

Մնակեան ԷՖ.ի օսմ. թատերախումբը, որ շարք մը յաջող ներկայացումներ տուած էր Պրուսայի մէջ, մայրաքաղաքս վերադարձաւ. կը յուսանք որ համակրելի դերասա-

նապեար, Չատինէն ետք, քանի մը ներկայացուց կուտայ ինչպէս Գատրգիւղ՝ Դոնպէս Բերա, ուր զինքը և իր խումբը տեսնելու և ծափահարելու ջերմ փափագ կայ թառերասէր հասարակութեան քով:

Ռեքեոս ԷՖ. Պեպլեբեան իր վարժարանին մէջ ձրիաբար ընդունած է հանգուցեալ ուսուցիչ Մկրտիչ Սարգեանի որդին՝ Դերենիկ, որ չորեքշաբթի մայրաքաղաքս հասաւ Իզմիրէն ուր կը բնակէր իր մօրը հետ: Պատրիարքարանը Պէրպէրեան վարժարան շրջեց այդ պատանին: Հաճութեամբ կը դիտենք այս առթիւ, թէ Պէրպէրեան էֆ: ներկայ տարելչանին ալ լայն տեղ մը տուած է իր վարժարանին մէջ՝ պաշտպանութեան կարօտ աղքատիկ և ուշիմ պատանիներու որոնք յանձնարարուած են իրեն Պատրիարքարանէն կամ Առաջնորդարաններէ:

Յաւակցութիւն.—Տօքթ. Վահրամ էֆ. Թորգոմեան՝ բանասէր բժիշկը և Ուսումն. Խորհուրդի ատենապետը, և Դէորգ էֆ. Թորգոմեան՝ Տնօրէն Պրուսայի շերամաբուծական վարժարանին՝ դժբաղդութիւնը ունեցան կորսնցնելու իրենց՝ ծերունի մայրը, Տիկին Մէօճրիւպէ Թորգոմեան, որուն յուզարկաւորութեան տխուր հանդէսը կը կատարուի այսօր (Աւագ Ուրբաթ) Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցին, յուզարկաւորներու ստուար բաղմութեան մը ներկայութեամբ: Խմբագրութիւնս իր վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալ Տիկնոջ ամուսնոյն ու զաւկընի որուն և մասնաւորապէս Տօքթ. Վահրամ և Դէորգ էֆ. Թորգոմեանի՝ իրենց այս ծնողական սուգին առթիւ:

Աւմաշու Դպրեվանքին վերատեսչութիւնը մասնախումբ մը կաղմած է Ուսուցչական մարմինէն, հանգուցեալ երաժշտապետ Համբարձում Չէրչեանի յիշատակին դամբարան մը կառուցանելու համար անոր գերեզմանին վրայ, եւ որպէսզի այս ձեռնարկը աւելի կարեւոր հանգամանք մը ստանայ, խորհեր է այս արուեստագէտին աշխատութիւններէն ծաղկաքաղ մը յօրինել եւ հրատարակել: Այս գործին յաջողութեանը համար մտադրութիւն կայ հանգանակութիւն մը կատա-

րել թէ՛ Արմաշու կողմերը եւ թէ՛ մայրաքաղաքիս մէջ:

Դաւրեթի առաջնորդական ընտրութիւնը կատարելու համար, Ս. Հայրապետը հրահանգ տուած է յատուկ կոնդակով որ տեղւոյն Առաջնորդական Փոխանորդին ընտրութիւնը շուտով կատարուի, հաստատուած օրէնքներուն համեմատ: Էջմիածնայ հոգեւորականներէն Տ. Տ. Մեսրոպ, Կարապետ, Մատթէոս եւ Բագրատ վարդապետները հաւանական ընտրելիները կը նկատուին: Պատգամաւորներուն ընտրութիւնը պիտի կատարուի Զատիկ տօներէն ետքը:

ՄԱՍԻՍԻ ԴԻՏԱԿԱՆ ՃԻՒՂԸ

Դիտական ճիւղը՝ խմբագրութեանս ըմբռնած ու մեր ընթերցողներուն փափագած եղանակով մշակող ձեռնհաս աշխատակից մը ունեցանք, այս տարուան սկիզբէն, յանձին ՆՈՒՊԱՐԻ որուն Դիտական չորրորդ Բրոնիկը կը հրատարակենք ներկայ թուով և որ պիտի շարունակէ պարբերական յօդուածներով ծանօթացնել աշխարհի գիտական նորութիւնները Մասիսի ընթերցողներուն: Մեր թերթին համար զգալի պակաս մըն էր այս, որուն լրացումը արդէն իսկ գնահատուած է շատերէ, մասնաւորապէս գաւառի ընթերցողներէ որոնք իրենց գոհունակութիւնը կը յայտնեն նամակներով: Բարեբաղդութիւն մըն է մեզի համար որ մայրաքաղաքիս ազգ. կրթական կարեւոր մէկ հաստատութեան մէջ քիմիական աշխատանոցին manipulatorի պաշտօն վարող մասնագէտ ուսուցիչ մը ստանձնեց Մասիսի գիտական բաժինին աշխատակցութիւնը, որուն համար պէտք կար նոյնքան բաղմակողմանի հմտութեան որքան ժողովուրդին հասկնալի լեզուով գրելու կարողութեան: Տօքթ. Յովս. Տէր - Ստեփանեանի հետ, որուն «Կէս—Բժշկական»ներու օգտաշատ շարքը վաղուց գնահատուած է մեր ընթերցողներէն, ՆՈՒՊԱՐ կը լրացնէ գիտական բաժինը որուն նոյնքան ոյժ տալու փափագող ենք որքան կուտանք գրականին ու վիպականին:

ՄԱՄԱՅԻՆ ՔՐԻՍՏՍԱՐ

ԶԱՏԿԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(ԻԶՄԻՐԻ ԿԵԱՆՔԷ)

Ա.

Հօրը յանկարծական մահուան վրայ ուսումը կէս ձգելու ստիպուած՝ ծննդավայրը դարձեր էր Արտաշէս: Բարիզի առեւտրական վարժարանի ընթացքին հետեւիլը և տիպար վաճառական մը ըլլալու սահմանուիլը՝ պատճառ չէին եղած, հոն ժուժկալ և աշխատասէր կեանք մը անցընելու: Ընդհակառակը, ուղած էր օգտուիլ ա՛յն սանձարձակ ազատութենէն, զոր օտար միջավայրի մը մէջ, ուսանողի կեանքը իրեն կ'ընձեռէր: Հօրը դրամարկղը լեցուն էր և իրեն՝ միակ զաւկին քմահաճոյիցը առջև՝ բաց: Սխալ հասկըցուած սէր մը, անհաշիւ կուտար իրեն և ինք, նոյն ձեւով կը ծախսէր: Գարթիէ Լաթինի դարեջրատունները իր մեծագործութեանց արժանի թատր մը չէին, ինքը, աւելի զուարճալիներու և կործանարարներու դիմել ուղած էր և գիտենք թէ զրամը այս կարգի բոլոր միտումները կրնայ գոհացնել:

Ահա այդ վայելումներու էն վառ չրջանին էր, որ կը պատահէր հօրը մահը, ու ինք՝ միակ ժառանգորդ՝ գործի գլուխ անցնիլ կրտսիպուէր: Առեւտրական ընդարձակ, տարածուն գործառնութիւնները՝ հսկող տէրի մը ներկայութիւնը կը պահանջէին և ինք ստիպուած էր՝ այն ըլլալ: Երբ մեծկակ հարստութեան մը հետ մինակ մնաց Արտաշէս, պահ մը մտածեց: Ո՛րչափ ալ չռայլ, զեղի ուսանող երբ հասկցաւ թէ ա՛լ մօտէն կամ հեռուէն հսկող մը չը պիտի ունենար, սխալ վախալ, ինքնաշխատութեամբ առաջ եկած վաճառականի մը որդին ըլլալով, — մայրը զինքը աշխարհ ընրած միջոցին մեռած էր, — մինչև քսան տարեկանը անոր թեւին տակ մեծցած էր: Հօրը բարոյական գերազնիւ կեանքը, եթէ չէր ազդած իրեն, գէթ առեւտրականը, մինչև այն ատենը ծիլ չար-

ձակող՝ արմատ մը ձգած էր իր մէջ: Գիտնալով որ իր բացած ձեղքերը լեցնող մը կար, ծախսած էր անհաշիւ. հիմայ սակայն պակասը պակաս մը պիտի մնար՝ եթէ այդ ընթացքով շարունակէր, ուստի հարստութիւնը որ իրեն համար ամէն ինչ կ'ըլլար, յանկարծ պահելու զգացում մը կը ծնցնէր իր մէջ: Ասոր վրայ մտածած էր ճամբորդութեան վեցօրեայ տեւողութեանը միջոցին և երբ ծննդավայրը՝ Իզմիր ոտք կը կոխէր, արդէն որոշած էր հետեւելիք ուղին:

Իրաւ ալ, ամբողջ վեց ամիսը, զոր անցուցեր էր առկախ ինդիւնները կարգադրելու, իր հեղինակութիւնը բոլոր ստորադասեալներուն և յաճախորդներուն ապացուցանելու, նոր և բանիմաց կարգ ու սարքերով ու գործառնութիւններով զբաղելու՝ իր մտադրութեանցը ու կամեցողութեան օգտակար և զօրաւոր ըլլալը ցուցնելու բաւած էր: Մէկ բառով, կրցեր էր հօրը արժանաւոր յաջորդը ըլլալ, իր մէջ ճարպիկ առեւտուրի մարդ մը ծնցնել:

Բայց, առեւտուրի մարդ ըլլալ, ընկերական կեանքի օրինակելի ներկայացուցիչ դառնալ կը նշանակէր: Առջի ամիսներու անդու, յոգնատանջ աշխատութիւնները, պահիկ մը զինքը ազատ չէին ձգած, քիչ մըն ալ նախկին ուսանողի կեանքին ակնարկ մը նետելու: Յոփ կիներու, խրախճանքներու, դրամին հայթայթած զուարճութեանց կեանքը՝ զոր վարած էր այնչափ ատեն արտասահման՝ առանց ազդեցութիւն մը թողլու չէին կրնար անցնիլ: Առհասարակ ամէն կարգի բնութեան տէր օտարաբնակ ուսանողի մէջ գտնուող այս բնական հակումը իր մէջ լաւ մը արմատ ձգած, ծիլ առած էր: Այս երկրորդ կարգի բնութեան առջև ու և իցէ զբաղում տեղի չէր կրնար տալ:

Բայց ծննդավայրը Բարիզ չէր և ո՛չ ալ ինք, հիմակ, ուսանող: Ունեցած դիրքը և գտնուած պայմանը չէին թոյլատրել իրեն, նոյն իսկ գիշերները անցընելու ա՛յնպիսի տեղեր ու երեւնալը կարծես թէ ընկերական և նոյնիսկ առեւտուրի կեանքին շատ պիտի ազդէր: Այն յարգանքը՝ որով կը չրջասպառէր

դինք՝ տեղւոյն բարձր դասակարգը, մեծապէս պիտի պակսէր, և այդ պէտք չէր որ տեղի ունենար՝ գէթ իր ժառանգած անբիծ անուան սիրոյն:

Այս բոլոր կէտերը, զոր գտնուած, ապրած միջավայրն իսկ ինքնաբերաբար իր ուշադրութեան կը յանձնէր, երկար բարակ խորհուրդու արժանի էին: Դեռ ամուսնանալու տարիքին հասած չէր համարեր ինքզինքը: Պէտք էր գոնէ 6—7 տարի մը անցնէին, երեսունին ոտք կոխէր, սնոր վրայ մտածելու համար: Խնչպէս անցունել այդ ամուրիութեան շրջանը, կարելի եղած չափով և իր հասկցած կերպով զուարճալիօրէն՝ առանց սակայն մազի չափ մնասելու իր ընկերային կեանքին: Քանի մը շաբաթէ ի վեր լրջօրէն կը մտածէր այս խառնակ, կնճռոտ խնդիրը լուծելու, երբ դիպուածը կամ իր սիրային բաղդախնդրական մէկ միտումը՝ եկաւ այդ հոգը իր վրայ առնել:

Բ.

Ամառ իրիկուն մը, զովանալու համար սովորականէն քիչ մը շատեկ գարեջուր խմած էր: Գլուխը թեթեւ մը կը դառնար, և աւելի քրտնելու սկսեր էր: Թէ՛ մէկէն և թէ՛ միւսէն ազատելու համար, պտտելու ելաւ փողոցը զոր երկսեռ բաղմութիւնը արդէն լեցուցեր էր. ինչ որ կը յուսար՝ պատահեցաւ և եթէ գլխի պտոյտը կրցաւ քիչ ժամանակէն վանել, զուարթ տրամադրութիւն մը մնաց սակայն, որ մտրակուելու, աւելնալու համար, ունէր իրեն պէտք եղածը: Բաց գոյն, թափանցիկ հագուստներու մէջէն նշմարուած, մակաբերուած աղուորութիւնները կնոջական հարստութիւններուն, որոնք շուրջ կը վխտային, իրեն ակամայ կը յիշեցնէին կեանք մը, որ սրտին կը խօսէր և անոր խորէն ցնցող վերաշունչներ կը ծնցնէր: Տարբերութիւնը որ կար անոր և ասոր միջեւ, սա էր որ հոն իր ճանչցած կիները հրաւիրալի, անպատկառ նայուածքներ ունէին. փոխանակ կէս ամէկոտ փշիւսներու, եւ այն տեղի միշտ վեր բռնուած շրջադեպները, ամբողջ սրունքներ կը ցուցադրէին, մինչդեռ հոս, բաց—խփիկ զղանցքներու տակ, հազիւ կրնար որոշել անոնց կէտ գծապատկերները:

Աղջիկ մը սակայն ուշադրութիւնը գրաւեց: Կիսաշխարհիկ երեւոյթը չունէր, բայց չունէր ալ շուրջիններուն շարժուածքը: Եթէ կատարեւապէս գեղեցիկ չէր, գէթ շատ հաճելի դէմք մ'ունէր: Տաքարին, 18 ամեայ աղջիկ մըն էր, զոր սկսաւ հետապնդել: Միւսը, կերեւայ թէ գոհ էր իր ըրած աղգեցութենէն, և գտած ընդունելութիւնէն քաջալերուած՝ չիք, հարուստի երեւոյթով այդ երիտասարդը կարծին անցընելու համար, ջանք չէր խնայէր:

Երկկողմանի փափաքը միութեան ճամբան չատ կը դիւրացնէ: Աղջիկը կրցեր էր Արտաշէսը մինչև իր տան առջև բերել, ներս մտած միջոցին յուսատու ժպիտ մըն ալ նետելով: Ա'լ առեւտուրի կեանքէն դուրս զբաղում մը գտնուած էր և չա՛տ հաճելի, ճշմարիտը, քանի որ փափաքած կեանքի պայմանին առաջնորդող ճամբուն վրայ կը գտնուէր: Տեղեկացեր էր թէ Էլէնին մայր մը միայն ունէր, և թէ կարուհիներու կասկածելի տարրին կը պատկանէր, ուր էն ազնիւ բնութենէն, այդ արհեստաւորութիւն անուան տակ ծածկուող յետին լկտին, կարելի է գտնել: Դժբաղդաբար թէ բարեբաղդաբար.—այդ կէտը պատմութեան վերջը մեղ պիտի յայտնէ.— այդ Յոյնի աղջիկը առաջիններուն չէ որ կը պատկանէր: Ու ասիէ դժուար չէ մակաբերել՝ թէ Արտաշէս սկսեր էր տունն իսկ իրեն այցելել, ուր կարի մեքենան մէկ կողմ դրած՝ Էլէնին սիրահարին գալուն անհամբեր սպասելով՝ անոր հայթայթած սիրուն արդուզարդերուն պճնումովը կը զբաղէր, առտուընէ մինչև իրիկուն: Եւ հա՛րկ է ըսել, թէ այդ այցելութիւնները ստէպ կատարել տալու համար, արմէն ձեգ կը թափէր և կը յաջողէր ալ:

Արդէն Արտաշէսին ուզածն ալ ինչ էր որ... Բաշուած, պատուաւոր թաղի մը մէջ ուր գետեղած էր Էլէնին ու մայրը՝ շաբաթը քանի մը անգամ այցելելու մէջ ինչ անպատեհութիւն կար: Եթէ նոյն իսկ ամէն ինչ երեւան ելնէր՝ ո՛վ գէշ կրնար ըսել իրեն: Վերջապէս երիտասարդ չէր ինք: Միւս կողմէ, եթէ իր պատկանած ընկերութեան

մէջ այդ վիճակին հանդէպ մուտային, ու քիչ մըն ալ մեղադրէին զինքը, չէ՞ր արժեր իր ազուտոր էլէնիին համար քիչ մը բարոյական զոհողութիւն մ'ընել . . . :

Եւ յետոյ, էլէնին՝ իր կնոջական բոլոր վարպետութիւնները, բոլոր հրապոյրները կը սիրազործէր, հարուստ, ամէնէն փափաքուած սիրահարին անհրաժեշտ դարձնելու համար ինքզինքը : Ու Արտաշէս քիչ մը բարոյական, շատկեկ մը՝ բայց ոչ իրեն ծանր դալու աստիճան նիւթական զոհողութեամբ, այդ իրեն պէտք մը դարձած զուարճանալու փափաքին լայնօրէն յագուրդ տալով, զինքը մարդերուն էն երջանիկը կը համարէր :

Երբեմն էլէնի համբոյրի մը, երկու քահանի մէջ, «Ե՞րբ պիտի կարգուինք» կը հարցնէր : Այդ հարցումին վրայ նորէն քահանա՝ Եւ երբ Արտաշէս կատարեալ ընականութեամբ կը խնդար այդ խենդ բառերուն համար, եթէ քիչ մը կասկած՝ ունենար ատոնց բուն նշանակութեան վրայ, էլէնիի պոռոչքոտ խնդուքին մէջ իսկ պիտի կրնար տեսնել՝ զսպուած բարկութեան մը առաջ բերած չրթունքներու կծկումը :

Գ.

Յարաբերութիւնը հետզհետէ կը մտերմանար և Արտաշէս մէկէ աւելի ինքնամոռացման ժամեր ունեցած էր՝ էլէնիի կաշկանդող թեւերուն մէջ :

Ճիշտ ատանկ գիշեր մը, երբ կէս-գիշնով վիճակի մէջ էր, տեսաւ որ աղջկան մօր առաջնորդութեամբ, երեք բալիքարիաներ — աղջկան ազգականներէն, — և երկու յոյն քահանայ ներս կը մտնէին : Իսկոյն հասկցաւ թէ ի՞նչ նիւթուած էր իրեն դէմ — այս ահռելի վարմունքին առջև ունեցած ինքնապաշտպանման զգացումը՝ խեղդեցին յոյն երիտասարդները : Քահանաները սկսան բաներ մը մուտալ. Արտաշէս ինքզինքը գէշ երազի մը մէջ կարծեց, ամբողջ մարմնոյն վրայ տըկարութիւն մը զգաց . . . ու քիչ ետքը, իր օրինաւոր կնոջը հետ սենեկին մէջ մինակ՝ առանց բան մը ըսելու, նոյն իսկ միւս սենեկին մէջ, առ ի զգուշութիւն դեռ սպասող, և սպասելով հանդերձ քահանաներով նորապսակ

ամուլին կենաց կոնծող բալիքարիաներու աղմուկէն, առանց բան մը լսել ու հասկնալ կարենալու՝ մինչև առտու մնաց :

Արշալոյսին, զոքանչը քանի մը յունարէն լրագիրներով ներս մտաւ, որոնց մէջ կինը սկսաւ կարդալ ա՛յն փայլուն նկարագրականը՝ զոր կ'ընէին ասոնք՝ Տիար և Տիկին Արտաշէս . . . Կանի ամուսնութեանը համար՝ կատարուած այսինչ քահանաներու ձեռամբ և . . . բարեկամներու ներկայութեան :

Ու հիմայ՝ ա՛լ ուշաբերած՝ հասկցաւ որ գէշ երազի մը լսաղալիկ չէր եղած. բաւին լայնագոյն իմաստովը ահռելի իրականութեան մը առջև կը գտնուէր :

Հոս շատ երկար պիտի ըլլար թուել, ունեցած այն ամէն հոգեկան ընդվզումները, որոնք արդէն պատշաճութեան ամէն սահմանէն դուրս խնդրի մը՝ այդ տարօրէն ամուսնութեանը առիթով ծագած՝ իրեն տարապայման, հակամարդիային վրիժառութեան զգացումներ կուտային : Կը հասկնար թէ եղածը դարմանելու, գտնուած անդունդէն, բարոյական մեծ անկումէ մը վերելակելու, ազատելու համար, միակ միջոց մը կար. մեռնիլ : Իրենց ամուսնութեան յաջորդող քանի մը ամիսները, շարունակ այդ գաղափարին վրայ սեւեռեալ մնաց : Բայց քանի ժամանակը անցնէր՝ այնչափ աւելի կըղզար, թէ դիւրին չէր մեռնիլ և ոչ իսկ թողուլ բոլոր գործերը ու հեռանալ քաղաքէն : Իսկ բաժնուելու համար ընելիք ձեռնարկը այնպիսի գայթակղութեանց դուռ պիտի բանար որ անոր վրա մտածելն իսկ չէր արժեր : Իրեն կը մնար միայն կարելի եղած չափով տանելի ընելու աշխատիլ ա՛յն կեանքը, զոր ստիպուած էր ունենալ :

Բայց յարմարագոյն կարծուած ամուսնութիւններն իսկ, հարիւրին իննսուն դժբաղդութեան բոյներ կ'ըլլան, ո՛ւր մնաց օտար կարուհիի մը միացուած կեանքը :

Էլէնի՝ իր փառասիրութեան զագաթնաւ կէտը հասած՝ զինքը Արտաշէսին և անոր հալածութեան տէր տեսած՝ նոյնիսկ պէտք չէր զգար, զայն առաջուան պէս սիրոյ ազուպատիր ցոյցերով շրջապատելու : Բայց միայն

այս ըլլար, անոր իբր ամուսին ունեցած յանցանքը: Խեղճ Արտաշէսը ինչեր չէր սորված, ինչեր չէր սորվեր: Համբերել պէտք էր սակայն, և նուազ տառապելու միակ միջոցը, տնտարբերութեան մեծագոյն պաշար մը ունենալու մէջ կը կայանար:

Դ.

Իրենց ամուսնութենէն 5—6 ամիս վերջ ունեցած աղջիկ զաւակը, ի սկզբան քիչ մը միխթարութիւն բերաւ իր այդ թունալի կեանքին: Հիմակ հայրական պարտականութիւն մը կը ծնէր իր մէջ: Պէտք էր գոնէ աղջիկը ազատել ա'յն տղամալի կեանքէն, ուր մինչև ուսը միտնուած էր ինք: Սակայն քանի՜ իր սիրուն Մառին մեծնար, յուսախաբութեան ցաւը ա'յնչափ մեծ կ'ըլլար: Իր՝ իբր ընտանիքի պետ՝ հետզհետէ կորսնցուցած ազգեցեւորները, երբեք չպիտի բաւէր աղջիկը ազատելու ա'յն չրջանակէն, զոր կը կաղմէին կինն ու անոր մարդերը:

Աղջկան չուրջը ամէն ոք Յոյն էր: Նոյնիսկ Յոյնին իբր օգնական, հայ դաստիարակուհի մը կարգելու գաղափարը, զոր հազիւ համարձակած էր յայտնել, տունի կեանքը շարաթնեցող ա'լ աւելի դժոխային ընելու բաւեր էր: Հազիւ կրցած էր մինչև ութ տարեկան հասակին՝ անոր քիչ մը հայերէն սորվեցնել. բայց ինչ օգուտ կրնար ունենալ այսչափը. քիչ մը մեծնալէ ետք, Մառին այդ գիտցած կտոր մը հայերէնն ալ չ'ը պիտի ամբնար (!) խօսելու, քանի որ էլէնի չէր խնայեր բոլոր ջանքերը, զայն կատարեալ և իր հասկցած կերպով Յոյն մ'ընելէ: Արդէն անոր անունն իսկ Մառիգա էր: Խեղճ Արտաշէս, իրեն արիւնալի սրտով դիտել միայնկը մնար՝ այս միխթարութեան օգը ցնդիլը:

Օր մը յանկարծ միտքը բան մը եկեր էր սակայն, յոյսի նշոյլ մըն էր ունեցած: Մինչև այն ատեն, իր կրօնքին հանդէպ՝ տխմար սկեպտիկութիւն մը ցցուցած էր. և հիմայ ուշամնաց տաք վերաբերում մ'ունէր դէպի այն: Գուցէ անոր մէջ պիտի գտնէր իր աղջիկը ազատելու միակ միջոցը, պէտք էր գոնէ կրօնքով հայ մեծցնել զայն:

Այս կէտին մէջ ա'լ չէր ուզեր անտարբեր

մնալ: Ուստի իթման գիշերը, իր ծունգերուն վրայ նստեցուցած Մառին՝ երբ պահ մը մայրը հեռացած էր՝ կամացուկ մ'ըսաւ.

—Աղուօրս, այս գիշեր կանուխ պառկէ հէ՞. տեսնա՞ս քեզի ուր պիտի տոնիմ, վաղը առտու կանուխէն:

—Ուր, բարաքի:

—Ժամը. հայէ հոն ինչեր պիտի տեսնաս, վաղը առտու Քրիստոս յարութիւն պիտի առնէ:

—Իրա՞ւ, բարաքի... ու քիչ մը մտածելէ վերջ՝ բայց ես չպիտի կրնամ առտուն քու Քրիստոսիդ յարութիւնը տեսնել: Մաման պատուիրեց որ կէս գիշերին քրիկէ Տեսրի-նային հետ Այ—Նորկին երթանք տէ Մամա-յին Քրիստոսին յարութիւնը տեսնանք:

ՊԱՐԷՏ

Մառիսի նախորդ թիւով հրատարակուած գրաբար նորավէպին մէջէն, Պարսիք պարս-նոցին, կուղղենք հետեւեալ երկու բառերը՝ ձեռագրին համաձայն:

Էջ 179, սիւնակ Ա. վարէն սկսելով Յրդ տող «դրանց ի դուրս» պէտք է կարդալ «դրաց ի դուրս»:—Նոյն էջ, Բ. սիւնակ, վարէն սկսելով 12րդ տող «բնակին» պէտք է կարդալ «բնակին»:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ 11րդ թիւը հրատարակուեցաւ այսօր: Տարեկան բաժանորդագրինէ արտասահմանի և գաւառներու համար 60 դր. Կ. Պոլսոյ համար 50 դր.: Հատը 40 փարայ: Թերթին արտօնատէր—խմբագիր Արմէն էֆ. Լուսինեան կը ինդրէ մեղմէ ծանուցանել թէ Կ. Պոլսոյ բաժանորդագրութեանց գործը ուղղակի ինք ստանձնած է, գաւառային բաժանորդագրութիւնները թողլով հրատարակիչ Նշան էֆ. Կ. Պէրպէրեանի, և թէ Հանրագիտակը աւելի՜ ճոխ նիւթերով պիտի երեւնայ. այսուհետեւ: Խմբագրատան հասցէն է՝ Պոլիս, Մէրճան Շուկայ, Իմամէլի խան, Թ. 20:

Արսոնաք Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՆԵԼԻՔ Օրագրի

ՏԵՒԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ՏՈՒԹ՝ ՄՍԼԽԱՍԵԱՆ

(ՎԿՂՅԵԱՆ ԲԱՐԻՉԼԻ)

Մ Ա Ս Ն Ա Գ Է Ց

անանց հիւանդութեանց, մանկաբարձ, վիրաբոյժ

Բերայի դարմանատունը փոխադրած է՝ կրկին Բեքա Սաքըղ Աղաճ փողոց, թիւ 26, ուր հիւանդներ կ'ընդունի ամէն օր կէս օրէն վերջ ժամը 1—4 (Ը. Ե.):

Ժամադրութեամբ՝ կէս օրէն առաջ:

Կարօտ հիւանդները կը դարմանէ Բերայի (Սը. Երբորդութեան եկեղեցւոյ) Աղքատախնամի դարմանատունը՝ ամէն հինգշաբթի՝ առաւօտէն մինչեւ կէս օր:

Մանօր. — Վիրաբուժական, ուղղա-
մարդական (orthopédique), ծննդաբերա-
կան եւ ամէն կերպ արգանդի հիւանդու-
թեանց շատ կարեւոր գործողութիւնները-
ենթականերու տուններուն մէջ՝ կատար-
եալ ապահովութեամբ եւ մեծ յաջողու-
թեամբ կտրենալ կատարելու համար՝ գի-
տական ամենավերջին մեթոտներու հա-
մապատասխանող կատարելագործեալ գոր-
ծիքներու մանրամասն ամբողջութիւնը
ստանացուած է:

AUTALON DOR

O ԹԱԼՈՆ ՏՕՐ

ԲԱՐԻՉԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ԳԱՌԼՕ ԱՅՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՕՇԿԱՆԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՇԱՄԱՐ

Նաեւ կաղերու համար պատրաստուած

Կալաքա Վոյվոսա փողոց թիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորածնութեան
համաձայն կօշիկներու յանձնարարութեան
համար, — մանաւանդ չափու վրայ շինուելիք,
— կ'արժէ անգամ մը այցելել սօյն վաճառա-
տունը որ ո'չ միայն իր պատրաստած կօշիկ-
ներուն անկունութեամբը ու ճաշակաւորու-
թեամբը, այլ նաեւ գիներուն աժանութե-
ամբը առաջնակարգ կը հանդիսանայ:
Ամէն քօռկներու դիւրամատչելի պատրաստ
ապրանքներ ալ ունի:

Յ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Ր

Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

1904 ՏԱՐԻՈՅ ՃԱՄԱՐ

(AGENDA INTERNATIONAL)

Թուրքերէն, Հայերէն, Ֆրանսերէն եւ Յունարէն լեզուներով
Յաւաջիւլայ 1904 տարւոյ համար նախորդ տարիներէն աւելի ճոխ եւ աւելի
խնամով պատրաստուած եւ արդէն հրատարակուած է

Պարզ լարակալ 3 դր.
Ընթիւ լարակալ 5 »
ՈՍԿԵՉՈՐ ՓՍՈՍԿԱՍՉՄ 8 »

{ 25 օրինակիւ աւելի զնոդ-
ներուն գոհացուցիչ զեղծ

Կը գտնուի Պոլսոյ եւ գաւառաց բոլոր գրավանաւներու եւ բոքա-
վանաւներու իով: Հրատարակիչն է

Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ, ՊԱՏՐԱՍ ԶԱՌԻՉ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուքրազով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՎԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ. ՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ եւ ՇՈԳԵՆԱԻՈՎ ՈՒՂԵՒՈ. ՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ եւ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՈՐԱԵԼԻՆ ԴԷՄ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,667 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

137,300,000 »

Ընկերութեան անպահովագրուողներուն վճարուած դրամա-

գլուխ եւ վնասուց հատուցում

282,000,000 »

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագին եւ տուցոս

54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա,

ՍՐՄԱՔԷՇԻ ԶՈՒՐ

(ՊԷՅՔՕԶ)

ԱԽՈՐԺԱՀԱՄ, ԹԵԹԵԻ ՈՒ ՕԳՏԱԿԱՐ

Սոյն հանրածանօթ ազդիւրին ջուրը, ախորժահամ եւ վճիտ, յանձնարարուած է մայրաքաղաքիս ականաւոր բժիշկներուն կողմէ, որոնք անձամբ փորձած են անոր յատկութիւնները: Մասնաւորապէս, քիմիագէտ Պ. Բիէռ Արէռի տարրալուծած է զայն եւ թաշտէլէնի ու Գանլրգամաքի ջուրերէն գերազանցապէս լաւագոյն դասած է, ստուգելով որ անոր ջրաչափական աստիճանը 1⁰ է եւ բնաւ ստամոքսի ծանրութիւն չիտար:

Տեղական հիւանդանոցներէն շատեր, իրենց բժշկապետներուն յանձնարարութեամբ, այս ջուրը կը գործածեն, որ ուղղակի ազդիւրէն կը բերուի ամենայն խնամքով եւ մաքրութեամբ, չիչերը ու տակառները հոն լեցուելով ու զմտտուելով:

ՍՐՄԱՔԷՇ ԶՈՒՐԻն գերբնախի ու անմրցելի ըլլալը հաստատած են նաեւ, քիմիագէտ Տօքթ. Մաննիէ զատ հետեւեալ բժիշկները.

Տօքթ. Տօւքա փաշա (ընդհ. քննիչ առողջապահական վարչութեան) Կապուչի, Զէրրի, Սթէքուլի, Ավիլիանօ, Մալլի, Միրապէլ, Բանայօթ պէյ, Պալիտիս, Քարաքօվաքի, Բլէմով, Մօրթման, Տէլլասուտա Ֆայիգ փաշա եւ Սիմօնօֆ:

Վաճառման կեդրոնատեղիներն են՝ ԲԵՐԱ, Մեծ-Փողոց, Հալէպ Խան, Թ. 7:— ՊՈԼԻՍ, Սիրքէնի, Պապը-Ալիի մեծ պողոտային վրայ, Թ. 34 մթերանոցը, ինչպէս նաեւ Շուկային Նուրի Օսմանիյէի դրան կից Թ. 21 խանութը:

Սոյն մթերանոցներուն մէջ կը վաճառուի նաեւ, ՍՐՄԱՔԷՇ ջուրէն դատ, Գորաքուլաքի ջուր: Դիւները շատ աժան են՝ ժողովրդեան դիւրամատչելի ըլլալու համար: Փորձի համար չիլ մը գնեցէք ՍՐՄԱՔԷՇԻ ջուրէն, եւ այնքան համով ու թեթեւ պիտի գտնէք, որ վատաբար պիտի գործածէք զայն ախուհեան:

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԷՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒԲՍ ԼՈՒԻ ՏԵ ՊԱՎԻԷՌ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. բնդդեհի եւ ծովային արկածներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամատունն է Ի Կ. Պոլիս, Բոքսի Լիօնէ

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Դրասնեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52—53—54—55—56

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ ՄԵՆ ՓՈՂՈՑ ԹԻԻ 200

Կալաթա-Մէլլայի Լիսէին Գ. Բ

Գե. Նե. Շբ. օրերը առաւօտեան կանու-

իւն մինչեւ իրիկուան Ժ. 11¹/₂

Բե. Գե. Ուր. օրերը 6ն մինչեւ 11¹/₂

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ՁՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Գնեցէք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱ. ԳՈՒԼԵԱՆԻ՝ Զինաստանէն, Հնդկաստանէն, Ճապոնէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած բարձ, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն, որոնք ձերան եղանակին յարմարագոյն ըմպելիներ:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահէէ Գափու, ձէլալ պէյ խան, Թիւ 10:

Մասնաձեւեր Թուրքիոյ Գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Նիքիայոս:



ՏՕՔ. Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

դր. .

Դիտակոն շարժում	Բ. տարի (188)	20
» » »	Գ. » (1887)	20
Բնական Պատմութիւն Ա. հատոր (Կեդ.		
Հիւսուածքանութիւն եւ Մարդկային		
Կազմախօսութիւն ու Բնախօսութ. Դա-		
սագիրք երկրորդական վարժարանաց		40
Նախորդին համառօտը. Դասագիրք Նա-		
խակրթարանաց		8
Մազումն հայ տառից (Պատկեալ Իզմիր-		
եանց մրցանակաւ)		10
Մանրէաբանութիւն		10
Տիեզերք եւ իւր կազմութիւնը (Ֆ. անս.)		10
Առողջապահութիւն		25
Մանրական Դործարանք (Կազմախօսու-		
թիւն, Բնախօսութիւն եւ Առողջապահութ.		6
Մարդկային Սաղմնախօսութիւն		5
Բառացուցակ Ախտանուանց Բ. Տիպ.		3
Տարուինականութիւն, Գ. Տիպ.		3

Կեդրոնացեղին է

Մանիէոսեան Տպարան, Ֆինճալ Էլլար, Կ. Պոլիս

ՏՕ ՔԹ. Ժ. ԿԱԼԵՊ

Մասնագէտ միջանցքային հիւանդու-
թեանց: Վկայեալ Վիէննայի բժշկական Հա-
մալսարանէն եւ Բարիզի ու Պէրլինի հիւան-
դանոցներուն մէջ գործնական փորձեր կա-
տարած, Կը դարձանէ իրեն դիմող հիւանդ-
ները՝ գիտական նորագոյն մէթոտներու հա-
մաձայն: Հասցէ՝ Բերա, Թիւնէլի Բասաժին
դէմ, Նէմէնիճի փողոց, Թ. 31:


ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ԱՆԿԱՍՏԱՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Պատկերազարդ ընդարձակ Աշխար-
հագրութիւն. բարձրագոյն դասընթացք. —
Գին 6 ղրշ:

2. Պատկերազարդ Աշխարհագրութիւն
եւ Տեղագրութիւն Կ. Պոլսոյ. Տարր. դա-
սընթացք. — Գին 2½ ղրշ:

3. Պատկերազարդ Աշխարհագրութիւն.
Միջին դասընթացք. գին 3 ղրշ:

Կը գտնուին բոլոր գրավածառաց քով
եւ կը ծախուին գոհացուցիչ զեղչով:



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի
մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքե-
նայ մը սննհնայ, որովհետեւ լաւ մեքենայ
մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մա-
տուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը ան-
վերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:
Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Co.

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն ա-
ւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւ-
րագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝
ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ:

Սինկէրի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկէր Ընկերութեան վաճա-
ռատանց մէջ:

ՇԱՐԲԱՅԱՆ
ՄԱՍՆԱՎՈՐՈՒԹԻՒՆ

ԲԵՐԱ

1. Մեծ փողոց, Պոն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ:

ԿԱԼԱՅԹԱ

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը:
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ:

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյաղիա, Թրամվէյի կայարանին դէմ, 13:

ՍԻՆԿԷՐ

Չարլը Պոյու, Թ. 120:

Դասերը եւ նորոգութիւնք անձի:

Կասաբեալ երաշխաւորութիւն:

Մասնանիւղեր գաւառաց բոլոր ֆաղափներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց,
Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը: